Ձև N 5.5.1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 52

հերթական համարը

Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ
(ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքը (Այգեհովիտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	*Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը*	Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը)
ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի (Այգեհովիտ բնակավայր) 11-009-0399-0022 կադաստրային ծածկագրով 0.05129 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	11-009-0399-0022 կադաստրային ծածկագրով 0.05129 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր	Համաձայն Տավուշ-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի

Հանձնաժողովի նախագահ՝

Ե. Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Լ. Առաքելյան

Երևան, «20» «փետրվարի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրություններով ներկայացված պայմանները (կցվում են):

4. Իջևան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Այգեհովիտ բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի (Այգեհովիտ բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: